ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am
Ե/2022- 22.09/393
22.09.2022թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝
Արարատ Գրիգորյանին

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 7364
23 09 2022

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

2022թ. սեպտեմբերի 13-ից Ադրբեջանի կողմից ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ իրականացված ռազմական գործողություններով մեր հայրենակիցներին պատճառված ֆիզիկական, նյութական և հոգեբանական վնասների հետևանքով նրանց խախտված իրավունքների վերականգնման և իրավական աջակցություն տրամադրելու նպատակով Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատներ և դիմումներ ներկայացնելու համար, դիմում եմ Ձեզ խնդրանքով, հնարավորինս սեղմ ժամկետներում համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դրույթների՝ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. *2022թ. սեպտեմբերի 13-ից Ադրբեջանի կողմից սանձազերծած ռազմական գործողությունների արդյունքում ՀՀ Վայոց ձորի մարզի ո՞ր համայնքներն են տուժել:*
2. *Նշված համայքներում ադրբեջանական ռազմական հարձակման հետևանքով քանի՞ քաղաքացիական անձ է տուժել, ի՞նչ բնույթի են եղել հասցված վնասները:*
3. *Նշված օրերին ադրբեջանական ռազմական հարձակման հետևանքով Սյունիքի մարզից արդյո՞ք եղել են քաղաքացիական անձանց մահվան դեպքեր: Եթե այո, ապա քանի՞ անձ:*
   <u>Նման դեպքերի առկայության դեպքում կխնդրենք տրամադրել մահացած անձանց ընտանիքի անդամներից կոնտակտային տվյալներ՝ վերջիններիս հետ կապ հաստատելու և իրենց հարազատի իրավունքների պաշտպանության համար ՄԻԵԴ դիմումներ ներկայացնելու մասով մեր պատրաստակամությունը հայտնելու նպատակով:</u>
4. *Տուժած համայնքներից յուրաքանչյուրը ի՞նչ չափի և բնույթի վնասներ է կրել: Կխնդրենք մանրամասնել, թե համայնքներից յուրաքանչյուրում ի՞նչ օբյեկտներ և ի՞նչ նշանակության ենթակառուցվածքներ են վնասվել:*
5. *Տուժած համայնքներից յուրաքանչյուրում քաղաքացիներին պատկանող քանի՞ սեփականություն/տուն է վնասվել կամ քանդվել:*

Կխնդրենք տրամադրել սեփականության իրավունքի խախտումներ ունեցած, այդ թվում՝ ռազմական հարձակման հետևանքով ունեզրկված, տնից կամ բնակարանից զրկված կամ այդ մասով զգալի վնասներ կրած ընտանիքներից կոնտակտային տվյալներ՝ վերջիններիս հետ կապ հաստատելո, նրանց հետ հանդիպումներ կազմակերպելու և իրենց սեփականության իրավունքի պաշտպանության համար ՄԻԵԴ դիմումներ ներկայացնելու մասով մեր պատրաստակամությունը հայտնելու նպատակով:

6. *Ըստ մարզպետարանում առկա տվյալներին, ադրբեջանական ռազմական հարձակումից տուժած համայքների բնակիչները տարհանվել կամ սեփական նախաձեռնությամբ դուրս եկե՞լ են իրենց բնակավայրերից, թե ոչ: Եթե այո, ապա յուրաքանչյուր համայքից քանի՞ անձ կամ քանի՞ ընտանիք է դուրս եկել և որտե՞ղ են բնակեցվել:*

Հարգանքով,

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Տեր-Մովսիսյան
էլ հասցե՝ ntermovsisyan@hcav.am